

THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒ :

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն, Գ Բ Ա Կ Ա Ն ԵՒ Գ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ա. ՏՄԻԻ, ԹԻԻ 22 ՆԻ ԵՈՐԻ, ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 9, 1898 ԳԻՆ 3 ՍԷՆԹ

Գ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Կախարհի Մաքրելի ամեն ճիգը թափել պատերազմի առաջը...

Սպանիոյ կառավարութիւնը յօժարութեամբ ընդունեց Պապի միջամտութիւնը...

Պատերազմի ու ազգային պաշտպանութեան ծախսը...

Ամերիկայի ծովային ուժերը երեք մասի բաժնուած են...

Մինչև Զորքարթի օրը Նախագահը Մէսէճը չը զրկեց Բոնկրէսին...

Սպանիոյ թագուհին ան ձամբ ձեռք առած է ինդիքը...

Տիգրիսը մամուլը զրկուած պահուն կ'իմանանք...

Եւրոպական Տէրութիւնները կը աշխատին...

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԳՐՈՒՆԻԿ Անցեալ շաբթու 24 ժամուան մէջ...

Շարքի գիշերը կայսրու Զօլին մէջ տեղի ունեցաւ...

Տ. Չիթճեան նորէն խօսեցաւ Ս. Ոսկերեան Եկեղեցիին մէջ...

կաններն ալ այնքան սոգտ ըլլային ու չը խորհէին...

Իրաւ զաւեշտ մըն էր «Չիթճի խմբագիրներու զաւեշտը»...

Պ. Հայ Մօլիէր և Տիգրայու Թանգարանապետ Պարոնեան ալ ծաղրած է...

Վեց բանախօսութիւններ ըստ ասոնց երկուքը...

Տ. Չիթճեան նորէն խօսեցաւ Ս. Ոսկերեան Եկեղեցիին մէջ...

Իմ թէ՛ անունը և թէ՛ կասցէս գիտէ արդէն...

րենք նիւ Եօրք: Տ. Չիթճեան ալ կը զրկենք...

Ազատ Լսարանի մէջ խօսեցաւ նաև Տօքթր. Սիւնի...

Ունկընդիրները երկար ծախարութիւնով...

Ս. Բարթուղէմիոսի Մատրան մէջ Տօքթ. Գարբէլէան...

Ս. Բարթուղէմիոսի Մատրան մէջ Տօքթ. Գարբէլէան...

Խմբագիր Տիգրիսի վաճէ անունով մէկը...

Իմ թէ՛ անունը և թէ՛ կասցէս գիտէ արդէն...

ՀԱՄԱՐԱԳՈՒՄ Գ. ՄԱՐԿՈՍԵԱՆ 215 Ուէսթ, 24րդ փողոց

98. Մարտ 30, Ուսթըր

Տեղւոյն Հայկական Գրադարանի վարչութեան վեցամսեայ շրջանը լըրացած ըլլալով, Մարտ 20ին Ս. Փրկչի ժողովարարահին մէջ Գրադարանի անդամներու ընդհանուր ժողով մը տեղի ունեցաւ, ուր հին վարչութիւնը իւր գործառնութեանց անդեկագիրը ներկայացնելէն վերջ՝ վարչական անդամներու նոր ընտրութիւն կատարուեցաւ, և հետեւեալ անձեր կազմեցին Գրադարանի նոր վարչութիւնը: Տրգատ վարդապետան՝ Ա. տենապետ, Յակոբ Գառարեան՝ փոխ տանապետ, Յարութիւն Բրուտեան՝ փոխ տանապետ, Գրիգոր Մարգարեան՝ գրաստանագետ, Պատրիկ Կէօշէնեան՝ գրաստանագետ, Սարգիս Եսաղուպեան, Մարտիրոս Յովսէփեան, Մկրտիչ Բէլէշեան, Սարգիս Ոստիկեան, Սիմոն Արմաճանեան, . . . :

Ի Դիմաց Ուսթըրի Հայկական Գրադարանի Ընդհ. ժողովոյ: Ատենապետ վ. Յ. ԳԱԶԱՆՃԵԱՆ Ե. Պ. ՊՈՒՆԻԿԵԱՆ

98. Մարտ 25, Ուսթըր

Քաղաքի մէջ Խոյն. Միութիւն մը կազմելու գաղափարն յղացուելով ձեռնարկուեցաւ գործի. և արդէն 50ի շատ անդամներ արձանագրուած են և ամեն յոյս ունիմք թէ ի մտայ՝ քաղաքէն և շրջակայ Հայաստանի անդամակցողներու թիւը 1-200ի պիտի հասնի:

Սոյն Միութեան նպատակն է իր անդամակցող փոքր խնայողութիւններով կազմել գրաստանային մը և ձեռնարկել քաղաքի Հայ Հասարակութեան պիտոյից մասնակարարման՝ որով նախ օգնած պիտի լինի ժողովուրդեան իր սպառելիք նիւթերն աժան գնելու և երկրորդ՝ մինչև հիմայ Ամերիկայի վաճառատանց թողուած շահն Միութեան մնալով, որ մը պիտի կարենայ զայն բաժնել արտադրողներուն, այսինքն իւր անդամներուն. և այսու թերեւս օր մը յաջողի Հայ գործառնութեան մաս մը վերադարձուել ի Հայրենիս, իրենց իսկ խնայած գրամոլին և կամ առաջնորդել զայն առևտրական ստպակէզն և իրկել զիրենք գործարանական սպաննիչ միջոցորդէն, որոյ համար արդէն սանդղուած շին:

Արդ, Միութեանս գործ. ժողովը քաջածանօթ լինելով թէ այսօրինակ օգտակար ձեռնարկներ միշտ լըրագրայդ էջերուն նիւթերն եղած են, կը խնդրէ որ Խմբագրութիւնը ՏԻԿԻՍԻ մէջ քաջալերէք եւ խրատուէք Միութիւնս՝ իւր այս գծուարին ձեռնարկին մէջ:

Ի Դիմաց Խոյն. Գործ. ժողովոյ Ատենապետ Գ. Պ. ԹՈՎՄՃԵԱՆ Կ. Ս. ԱԼԷՔՍԱՆԵԱՆ

Պըրայթընի Հայ գաղութը ընդհ. ժողովի մը մէջ, Մարտ 29 Կիրակէ, տեղական ազգ. հոգաբարձութիւն մը ընտրեց հետեւեալ ազգայիններէ, Տիար Ս. Շահպաղեան, Գ. Իրայէլեան, Կ. Անանեան, Մ. Տէմարեան, Գ. Արամեան:

Ի Դիմաց Պըրայթընի Ընդհ. ժողովոյ Ատենապետ Մ. ԳԱԼՍՏԵԱՆ Մ. Կ. ԱՆԱՆԵԱՆ

ԱԶԳԵՐ

Մարտցի Տ. Լեոն Շահինեանին կը ծանուցուի թէ իրեն Հայրենիքէն եկած նամակ մը կ'սպասէ Տքթ. Միւրազեանի քով. 184 իսթ. 27րդ փողոց:

Ամէրիքըն Ռեզլըն Բ. Սաութհ Նորթոք Բոնն. առաջին կարգի Ռեզլընի գործառնութեան կ'ուզէ: Դիմել ուղղակի գործարանին: Յիշեցէք ՏԻԳԻՍՍԵ:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅՈՑ ԲԵՏԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ԳՈՐԾ. ԺՈՂՈՎՈՅ

Հայոց Բարեգործական Ընկերութեան գործադիր ժողովը ընդհանուր հանգանակութեամբ հասոյթ գոյացնելէ անմիջապէս վերջը՝ սկսաւ պատրաստութիւն ընել՝ գործ գանելու Պիւրոյի մը հաստատութեան և գործակալի մը ընտրութեան համար: Գործադիր ժողովը իւր հետ ունենալով նաև մեծապատիւ խնամակալութ. Տիարք Կիւլպէնեան, Թաւաճեան, Տքթ. Ա. Վաղեան և Տարեան, վերջին երկուստեան շարժական նիւստերուն մասնաւոր նիւթ ըրաւ Պիւրոյի յոյժ կարեւոր խնդիրը՝ սակայն ցարդ չը յաջողեցաւ յարմար անձ մը գտնել գործակալութեան պաշտօնին: Գործադիր ժողովը խորհեցաւ այլ և այլ անձանց վրայ, և մինչև իսկ մօտեցաւ որոշման մը գալ այսինչ և այնինչ անձին նկատմամբ, խորհըրդակցեցաւ այլ և այլ անձանց վրայ, սակայն հրապարակաւ չըսուելու մասնաւոր արգելքներ ելան: Ժողովը բանակցութեան մէջ է այժմ Հայ երիտասարդի մը հետ, որ յարմար սեպուած է այս պաշտօնին, և ուրախ պիտի ըլլայ եթէ յաջողի զայն կարգել իւր գործակալ*:

Գործադիր ժողովը ընտրած է նաև ներկայացուցիչ մը որ պաշտօնատեղւոյն համար կարգադրութիւն ընէ:

Գործադիր ժողովը կ'զգայ գործակալի պաշտօնին փափկութիւնը և կարևորութիւնը, և վասն որոյ կը փափաքէ ընտրել յարմար անձ մը. անձ մը՝ որը կրնայ թղթակցել Հայրենիք և Անգլիերէն լեզուներով, և է վասակելի, փորձառու, համբերող եւ գործունեայ: Գործադիր ժողովը անձկանօք կը բաղձայ փութացուել Պիւրոյի հաստատութիւնը, որ անով կարողանայ գոնէ մասամբ իւր լեցունել անգործ ազգայնոց կարևոր պէտքը, եւ միանգամայն թեթեւցունել Դիւրոյի անդամոց ոմանց վրայ ինկած բեռը, որ աւելի ծանրացած է գործակալ մը չըլլալուն պատճառաւ: Այս համառօտ տեղեկութիւնը կը ցուցնէ որ մինչև հիմայ Պիւրոն չէ հաստատուած ո՛չ թէ գործադիր ժողովոյ զայն հաստատութիւնը չըլլալուն, այլ յարմար գործակալ մը չը գտնուելուն համար:

Գործադիր ժողովը անխնայ աշխատութեամբ զբաղած է նաև իւր կազմակերպութեան ի վեր Ընկերութեանս միւս նպատակին համար, որ է՝ օգնել Հայ կարօտեցող անմիջական պիտոյից:

Անցեալ հինգ ամիսներու մէջ ժողովը ունեցած է նիստեր ամեն շաբաթ, եւ երբեմն երկու կամ երեք նիստեր մէկ շաբաթուան մը մէջ: Նա նուիրած է մի քանի ամիսներ իւր պակաս անդամոց թիւը լրացնելու և խնամակալներ գտնելու համար, ըստ որոշման ընդհանուր ժողովոյ, համարելով որ այս առաջին պայմանն է ժողովոյ յաջողութեան: Թէեւ իւր անդամոց ոմանց զբաղմանց պատճառաւ հրաժարումը, ոմանց հիւանդութիւնը և ոմանց քաղաքէն դուրս երթալը, մասամբ իւր արգելիք եղած են ժողովոյ գործունեութեան: Այսու ամենայնիւ բուական գործեր տեսած է: (Շարունակելի)

Ի Դիմաց Հայոց բարեգործական Ընկ. Գործ. ժողովոյ: Ատենապետ Ա. Մ. ՇԻՇՄԱՆԵԱՆ Ե. Մ. ՀԱՅՎՈՒՆԻ

* Այս տեղեկագիրը հրատարակութեան տրուած պահուն Գործադիր ժողովը նամակ մը ընդունեց այս անձէն, որով կը ծանուցանէ թէ Գործակալութեան պաշտօնն, և այն շարժու պիտի սկսի իւր գործոյն:

ԷՄԻՆ ԶՈՒԱ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ճնշուած ժողովրդի դատին ու փրկութեանը նուիրուած՝ և անոր կողմէն անոր հարստահարիչներուն դէմ անվեհէր ակտիւան հանդիսացած նահատակներ — նահատակուած նոյն իսկ այդ ժողովրդի ձեռքերով — ձայներնին ժողովրդեան խլացած ականջներուն լսելի ընելու համար՝ միշտ պարտաւորուած են եղեր խօսիլ կամ բողբոջու խորոյններու, կամ մթին տանջարաններու մէջէն, կամ կախաղաններու և կամ խաչերու վրայէն՝ իրենց ճշմարտութեան ակնդ շանթը պարունակող վերջին շունչերը որոտումի պէս արձակելով:

Զօլա ալ խօսելիք ունէր այն ժողովրդին որ թշուառութեան մասնուած է, և որ «երջանիկ լինելու իրաւունքը ունի». և ուստի բռնութեան զինտաններէն ժողովրդի շուրջը կուտակուած անիծից խաւարին մէջէն, մասը դէպի երանութեան ամպամածրար արշալոյսը ցցելով՝ «Լոյս և ճշմարտութիւն է ուզածս» գոչեց և անձնդիր զոհի մը պէս վաղեց դէպի ժողովրդին խօսելու բնմը — դէպի բանտ և դէպի մահապարտութիւն — Հեմիտիթիքով անգիտակցած ժողովուրդը անմիտ մոլեգնութիւնով կատաղած՝ քանիցս խուժեց Զօլայի վըրայ, զայն բղքեցու դիտումով. և կառավարութիւնը զայն դատապարտեց բանտի:

Զօլայի մարդասիրութեան և հանճարի աչքերը «Դեւի կղզիին» մէջ ցմահ դիւային տանջանց դատապարտուած անմեղ Տրէյֆուզ մը միայն չէր որ կը անանէին, այլ կառավարութիւն՝ ու բանակ կոչուած կազմակերպութեանց անբարոյականացեալ քանհաճոյից տակ, հնձանի մէջ կոխուող խաղողի պէս, ճգմուած ամբողջ ժողովուրդ մը, որմէ արիւնի ու արտասուքի հեղեղներ դուրս կը ժայթքեն: Այս ժողովուրդէն էր ալ, զոր Զօլա դըրել, ցնցել, հիւստիւնեցնել ու գիտակցութեան բերելու համար կամուտ խաչին մազլցեցաւ:

Այս ըստը սրտնեղիչ ու միանգամայն հիասթափ երեղութիւնուն մէջ յուժ շահեկան ու քաջալերիչ հանգամանք մը կ'արժէ խորին ուշադրութեան առնել: Նոր ժողովուրդը հինին շատ խուճէ: Եթէ հինը՝ իւր նահատակին ձայնին նշանակութիւնը կ'իմանար անոր մահուան վերջին շունչէն՝ նորը՝ Զօլայի ձայնին իմաստը ըմբռնեց, երբ նա դեռ իր երթալիք բանտին սեմին դուրսի կողմէ կանգնած էր: Մինչդեռ այդ ժողովուրդը երէկ Զօլայի համար «խաչ հան զդա» կ'աղաղակէր, այսօր բացառանջեց. «կեցցէ՛ Զօլա, իրաւունք ունի Զօլա»: և ժողովրդի այս անակնկալ գիտակցութեան առջև սարսնցաւ Գաղղիոյ կառավարութիւնը, որոյ հետեանօք Գաղղիոյ վճռալինջ ատենանք բեկանեց Զօլայի համար սերուած դատապարտութիւնը, ըսելով. «որովհետեւ Զօլայի դատը չտեսնուեցաւ այն ատենին առջև՝ ուր Տրէյֆուզ դատապարտուեցաւ. հետեալբար սրուած վճիռը չ'եղեալ պէտք է համարուի!!!» կամ ժիշդը խօսելով. որովհետեւ, երէկուան կուրութեամբ գարնանած ժողովուրդը՝ այսօր աչքերը բացած է. եթէ արդարը դատապարտեցք՝ ինքզինքնին նշաւակ ըրած կ'ըլլանք այդ ժողովրդին վըրէ ժիւղիքի ու անողք դատաստանին:

Երէկուան դատապարտուած Զօլան այսօր ազատ է: Յուսանք այս ազատութիւնը նոր դարաշրջախ մը կը բանայ ժողովրդեան իր ազատութեանը ձգտելու գիտակից ճակատամարտին: Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ

Մ Ա Ն Բ Ա Ն Ս Ի Բ Ի Բ

Եօնքըրտէն Տ. Յ. Փափագեան իր և որդւոյն կողմէն մեր միջոցաւ Արժ. Տ. Մաշթոց վարդապետին շրջեց § 7. 30, ի նպատակ որբոց:

—Արժ. Սաղ վարդապետ հրատարած է Պօսթոնի և շրջակայից հոգուութեան պաշտօնէն: Հրատարականը կը լսենք թէ ընդունուած՝ ու նորին Արժ. մասաղիք է այլուր երթալ:

—Շիքախոյի Հայերն կը լսենք թէ Արժ. Սաղ վարդապետն Հովիւ խնդրած են նոյն քաղաքի և շրջակայից համար:

—Մարտ 26 երեկոյն Պօսթոնի Բարեգործական Ընկերութիւնն հանգէս մը տուաւ Թալլըր փողոցի սրահին մէջ: Թէեւ մեծ բազմութիւն մը ներկայ չէր, բայց պատրաստուած յայտագիրն խիստ ճոխ ու հարուստ էր: Հանդիսին նախագահեց Տիկին Աթէշեան:

—Մարտ 26 երեկոյն Պօսթոնի Դաշն. Միութիւնն հրապարակային ժողով մը ունեցաւ, ուր խօսեցան Տիարք Լեոնեան և Ասլանեան: Այս վերջինն Փրօվիտէնէն հրաւիրուած էր:

—Պօսթոնի Բարեգործական Ընկերութիւնն անցեալ Շաբաթ երեկոյ միաձայնութեամբ որոշեց ցրտակցական հեռագիր մը յղել Տիկին Կատարժոնի:

—Լօրէնսի Հոգաբարձութիւնն որ լուծուած վիճակի մէջ է և ազգային գործերն երեսի վրայ, պիտի վերակազմուի կը լսենք՝ Արժ. վաղինակ վարդապետի ջանքիւ:

—Կը լսենք թէ Պօսթոնի Ս. Պօղոս Եկեղեցւոյ մատուռն նորէն պիտի գրուի Հայոց տրամադրութեան տակ:

—Ուսթըրէն կը գրեն Տքթ. Յ. Շալճեան և Տ. Եաղճեան՝ լուսանը կարչական ընկերութիւն մը կազմած են և իրենց յատուկ գործատեղի մը բացած են 377 Մէյն փողոցի վրայ: Տ. Յ. Շալճեան ծանօթ է Ուսթըրի և շրջակայից մէջ իւր հմուտ և փորձառու լուսանկարիչ մը:

Ի սրտէ յաջողութիւն մաղթելով այս Պարոններուն, կը յուսանք որ Ուսթըրի ազգայինները պիտի քաջալերեն զիրենք:

ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Ի Մ Ս Ի Բ Ա Ս Ս

Իմ սիրածս է առողջ ապրիլ Ազատ, բարի, երջանիկ. Ինքնօգնութեամբ տուն սեզ կազմել, Պահել տրիպար ընտանիք. կարօտեցող օգնել գործով, Մոլորելոց տալ խրատ, Անմեղադիր զանձն իմ պահել, Արդարադատ անարատ:

Իմ սիրածս է տեսնել զաշխարհ՝ եղեմական մի պարտեզ. Ճոխ բնութեան բերքն անհամար Ամեն ուրեք դէզ ի դէզ. Ներկայ սերունդը՝ գոհ բաժինի Ապրին քաղցրիկն յայդ եղեմ. Զ'իշխել հպիլ իրաւունքի՝ Շքեղազոյն ծառն ինձմ:

Իմ սիրածս է հողազնտի՝ Տեսնել Օրէնք, Տէր իշխան, Օրէնք մտաց, խզի սրտի, Համայն մարդոց բնական. Թագ, գաւազան, ջուրմ ու կղեր, Սև գարբու սև որդիք, Իրենց արեան գուրն են թաղուեր, Ալ չեն խարեր զխեղճ մարդիկ: Իմ սիրածս է՝ իրբև մի Հայ՝ Տեսնել ազգիս գերութեան կոճղ ու կապանք, անուր շղթայ, Բանտ և տանջանք՝ յախտեան Փշրած, վերցած. Հայ մարդ և կին Շատ երջանիկ ու անկախ, Հաշտ երկնից տակ կը բնակին Բանակալէ չունին վարս:

ՌՈՒՍ ՈՉԵՉԱԿԱՆԱՑ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԱՆԳՆՈՑ ՄԷՋ ՄԱՐՏՈՒԼԻ ԱՉԱՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԸ

Լոնտոնի ինքնակառուցողական եղանակադաս Ատենանի առջև տեղի ունեցած ուղարկումը դատ մը, որ ցոյց կուտայ թէ, Անգլիոյ մէջ ալ մամուլի ազատութիւնը, թէև ուրիշ երկիրներէ աւելի ընդարձակ կը նկատուի, վերջապէս սահման մ'ունի: Այդ սահմանէն անդին անցած նկատուեցաւ Վլաստիմիր Պուրոճէվ Ռուսիացի մը որ Լոնտոնի մէջ կը հրատարակէր Նարոտովոյ (ժողովրդի կամքը) անուն ընկերային-քաղաքական հանդէս մը: Այս անձը Դեկտեմբերի սկիզբները ձերբակալուեցաւ Նիքոլա Բ. Չարն սպաննել տալու նպատակով բրտոնի յօդուածները գրած ու տարածած ըլլալու ամբաստանութեամբ: Պուրոճէվի հետ կը ձերբակալուի նաև տէրը սոյն տպարանին, ուր կը հրատարակուէր այդ Ռուսերէն թերթը: այս վերջին անձն ալ Ռուսահպատակ Լեհացի մ'է: Պուրոճէվի և տպագրիչին տունները կը խուզարկուին և կը գերաւուին լրագրին համարները և ուրիշ կասկածելի թղթեր:

Փետր. 11ին տեղի ունեցած հրատարակչին դատաստանը: Ընդհանուր դատարանը դատը բացաւ հետևեալ խօսքերով.

— Բանտարկեալներուն դէմ եղած ամբաստանութիւնը շատ ծանրակշիռ է, և այս անսակ դատավարութեան մը խիստ բացառիկ պարագաները մէջ միայն հարկ կը տեսնուի: Լրագրի գաղտնի կը հրատարակուէր, 1500ի շաբ, որոնց մեծ մասը Ռուսաստան կը զրկուէր: Այդ լրագրի յօդուածներով կարգ մը անձանցով անձեր» կը քաջալերէին ու կը գրգռէին Ռուսաց Չարը սպաննելու: Լրագրի կը ներկայանար իբր պաշտօնաթերթը (Նարոտնաց Վօլիա) անուն ընկերութեան մը, որուն կամքըն էր «ժողովրդին կամքը» արտայայտել: Ընկերութեան մէկ նպատակն ալ էր հաստատել «արտաքին գրութիւն» մը, ինչպէս իրենք կ'ըսէին: Յօդուածները կը հրատարակէին ժողովուրդը նմանիլ այն «ակամաւոր» յեղափոխականներուն, որոնք 1880ին Փեդրպուրիի ձմեռանային պալատին մէջ ուժանակ պայթեցուցին, որմէ 11 զօրքեր սպաննուեցան և 56 անձեր ծանրապէս վիրաւորուեցան: կը յայտարարէր նաև նմանիլ անոնց, որք 1881ին ուժանակութեամբ Աղեքսանդր Բ Չարը սպաննեցին: Թերթի մը մէջ տեղ տեղ յեղափոխական նկարագրով ունեցող նախադասութիւններ սպորտած ըլլալու պատահական պարագայ մը չէր այս, այլ յօդուածներուն ամբողջ զիտումը բռնի և յեղափոխական միջոցները քաջալերելէր: Օտարականներու, ըստ շարունակելով դատարանը, կը թոյլատրուի գալ ապաստանի մեր արտուքը և վայելել այն ազատութիւնը, որուն համար իրաւամբ կը պարծինք ամենքս: Բայց աններելի է թողուլ որ անոնք հրատարակէին մեր երկրին մէջ այս աստիճան ծայրայեղ գրութիւններ: Թերթին առաջին յօդուածին մէջ կը յայտարարուի հետևեալը «Նարոտնայա Վօլիան», և միայն, այն, արժանացաւ ժողովրդային ընդհանուր վստահութեան և յարգանքին: միայնց իր գրոջին տակ յեղափոխական ցրուած ուժերը. սասանեցուց Ռուսական բռնակալութեան հինաւուրց հիմքը և զայնս բերաւ հասուց եղբւր այն անդունդին, ուր զըրուելու սահմանուած է: Բայց Նարոտնայա Վօլիան դեռ լրացուցած չէ իր մեծ գործը. կուրին պահան-

ջած ահաւոր ճիգը զինք ուժասպառ ըրաւ, և զինքը զրկեց առաջնորդող պետերէն, որոնք մեռան կուրին մէջ. Լքուած թուրքերը ընկերներէ, անարգուած իր երէկի գաշնակիցներէն, սկարացաւ, վհատեցաւ և իր յաղթանակին շարժումը կասեցուց ճիշդ յաղթանակին նախընթաց օրը...: Նարոտնայա Վօլիան ո՛չ միայն մեր շարժումին մէջ մտցուց քաղաքական պայքարի գաղափարը, այլ և գտաւ գործունէութեան համապատասխան կերպ մը — քաղաքական ահաբեկումը (թերորիզմ) — որը գերազանցապէս կը յարմար իր բոլոր դերերուն և Ռուսիոյ արդի կացութեանը: Յօդուածին մէկ ուրիշ մասը կ'ըսէր. «Աղեքսանդր Բ. նոյն իսկ քանի մը տարի չկրցաւ դիմանալ մաքառումին սաստկութեանը, և տեղի տուաւ: Աղեքսանդր Գ. ալ գուցէ շատ շատ մէկ երկու տարի դեռ դիմանար. անկէ վերջ տեղի պիտի տար, «վերէն բարենորոգումներ» պիտի ստիպուէր տալ «վարէն յեղափոխականներու» առաջը առնելու համար»: Յօդուածը կը շարունակէր այսպէս. «միևնոյն Նարոտնայա Վօլիաի առաջին հերոսական մարտէն վերադարձով է որ իրերու կացութիւնը կը փոխուի: Այս բանը թէ՛ Ռուսիոյ և թէ՛ արտասահմանի մէջ երթալով աւելի բացայայտ երպով կը հասկցուի, և կը յուսանք որ Նարոտնայա Վօլիայի վերակենդանութեան նախընթաց օրուան մէջ կը գտնուինք...» * * *

(Շարունակելի)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԲԱՅՑԻՒ ԵՒ ՍԱՄՈՒՆԷԼ (Պատմական վէպ) Ա. Բ. և Գ. Գիրք Գրին է § 1. 75

Իսկ «Դաւիթ-Բէկ» Հատոր Ա. Բ. և Գ. վերջնայով, և «Կայծեր» Հատոր Բ. լիակատար, լոյս պիտի տեսնեն ներկայ տարուի ընթացքում, որոնց բաժանորդագրութիւնն շարունակուում է. երկու գրքի միտաին բաժանորդագրին է՝ § 2½, իսկ լոյս տեսնելուց յետոյ կ'արժենան § 3½: Ցանկացողները թէ՛ «Սամուէլի» և թէ՛ «Դաւիթի» միւս երկերի համար, կարող են դիմել հետևեալ հասցէին՝ Mme. Raffi 270 Uxbridge Road Shepherd's Bush, London W.

Վերջերս ոմանք որոշ գներէն աւելի սկսած են վաճառել այս գրքերը, իբր գրավաճառ իրենց շահը աւելցնելով անոնց վրայ: Տիկին Բաֆֆի կը գանգատի այս մասին, և կը փափաքի յայտարարել թէ անմահ հեղինակի գրքերուն խիստ օժանդի որոշելուն պատճառն է ժողովրդեան դիւրամտուելի ընկ զանոնք: Նիւ Եօրքի միակ ներկայացուցիչն է Տ. Մ. Թաշճեան, 251 Ուիլիամ Սթ. որ առանց շահու կը վաճառէ Բաֆֆի բոլոր գրքերը:

Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ճ Ա Ռ ԳՈՂՈՍ Մ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ 23 Կրին Փողոց, Ուսթըր Մասս

Ուրիշ տեղ մի՛ նայիք կօշիկի համար, մեր քով կը գտնեն ճաշակիլ յարմար:

Պատիւ ունիմ յայտարարելու արգոյ Աղաքանց որ Չատկուայ առթիւ ամեն կարգի կօշիկներ պատրաստած եմ, (արանց, կանանց, աղայոց և աղջկանց) համար: 98ի վերջին մօտային գեղեցկագոյն կօշիկներ: Նմանք երբէք չ'ըսուած գներով:

Ա. Թ Օ Փ Ո Ւ Չ Ե Ա Ն 239 Իսթ, 26րդ Փողոց, Ն. Ե. Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ճ Ա Ռ ԵՒ Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ճ Ա Ռ



Ամառուայ ամեն տեսակ կօշիկներ (արանց, կանանց, աղայոց և աղջկանց) կը վաճառենք խիստ օժան գներով: Արանց կօշիկներ § 1.25 էն 5.00 Կանանց « « 1.25 « 2.50 Տղայոց և Աղջկանց, 50 « 1.50 Նոր ապարուած կօշիկներ կը կարենք ձեւաւոր և վայելուչ կերպով, և կը նորոգենք ամեն կարգի կօշիկներ շատ օժան գներով:

Պ Ա Կ Ա Ս Մ Ը Մ Ե Ր Մ Է Ջ Կինաց ապահովագրութեան ամենալավագոյն Ընկերութիւն մը կը ներկայացնէ Աղեք. Թ. Տարազճեան: Պայմանք դիւրամտաշէլի են: Լիուի բացատրութիւնք հաճութեամբ կը արուին փափաքողաց: Հասցէ՝ 77 Ուէսթ 11րդ փողոց, Նիւ ԵՈՐԿ

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Յ. ՉԱՆՈՒՄ ԵՒ ՈՐԴԻՒԲ Ն Ե Ր Ա Մ Ո Ղ Թ Բ Բ Ա Մ Ա Ն Ա Պ Ր Ա Ն Ա Ց

Պատիւ ունիմք ծանուցանել արգոյ Հայ Հասարակութեան թէ վերոյիշեալ խանութի մէջ կը վաճառենք Շամու, Մըսըրի և Թուրքիոյ ամեն տեսակ ապրանքներ, գօրծրինակ պուշուր, ծեծած, լոխում, հալլա, խահ-վէի տէյրման և ճէզվէ, նէրկիլէ, թէմպէթի, Հայոց ազգային հիւանդանոցի սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ նպարներ ու անուշեղէններ: Նաև ունինք ամեն տեսակ պահարկ-ղէններ: Խիստ օժան գներ: Փորձեցէք: ՉԱՆՈՒՄ ԵՒ ՈՐԴԻՒԲ 73, Ուաշինկթօն Փողոց.


Հ Ի Ր Չ Օ Ղ Ա ՄԱՋԻ ԴԵՂ




Կը գօրացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թիւրքը: Միանգամից քանակաւ է սաղեղին արժէքը գիտնալու համար, որ արեւելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի միջոցով: Կը ծախուի բոլոր գեղազործներուն քով: Գրին 50 Սթիթ միայն:

Կարելի է ստանալ նաև Հայկական գեղարունէն — Ի Թիւ 472 Յրդ Ափիւ, Նիւ Եօրք:

ՃԻՒԼԻՐԱ ԶԷՅՆ ՎԱՃԱՌԱԿԱՆ Միաստի, առաջնակարգ սիկարի և Սիկարէթներու Թիւ 592 Յրդ Ափիւ Յիւնցէք ՏԻԳՐԻՍԸ կրր գնէք



Գարնան համար մեր ստացած տեսական և եւրոպական նոր ապրանքներն անկարելի է զին մասին մըրցման ենթարկել ուրիշներու հետ: Մեր երկար փորձառութիւնն ու արհեստին մէջ ունեցած հմտութիւնն ապրանքներու տեսակին հետ միացած կ'երաշխարեն սոյնպիսի հազուադէպ, որք չեն կրնար գերազանցուի: Փորձ մը բուսական է զքեզ համոզելու համար: Հայ յաճախորդներէն եղած շահու հարկին տար ցիտի յատկանայ Բարեգործական Ընկերութեան: Ուրիշներու երթալէ առաջ շահու է նախ դիմել մեզ: Կը ծախենք նաև ստալին կարգի հեծեղանիներ, շախմատ գներով:



Յ. Մ. ՉՈՒՄՐԻԿԵԱՆ Թիւ 628 Բրդ. ԵՎԸՆԻԻ, ՆԻՒԵՐԿ



Յ Ա Կ Ո Ւ Ց Խ. Խ Է Ր Պ Է Կ Ե Ա Ն (Ներկայացուցիչ) ՈՒԻԼԻՐՄ Գ. ԲԵՉԶԷՐ ԵՒ Ե Ղ Բ Ա Ր Ց, Վ Ա Ճ Ա Ռ Ա Վ Ա Ճ Ա Ռ Գ Գրինի, Օղիի, ռգելից Ըմպեկեաց և Թիւ 202, 204 ԻՍԹ 29րդ Փողոց, Նիւ ԵՈՐԿ, Ն. Ե.

Պատիւ ունի ծանուցանել արգոյ Հասարակութեան թէ իւր վաճառած ըմպելիքներն ոչ միայն փորձեալ և անխարդախ են, այլ և դիւրամտաշէլի են ամէն գասակարգի անձանց: Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Գալիֆորնիայի և տաճկան ամէն տեսակ ուրբի, օղի, գինի, շամբանիս, մասթիքայ, գարեջուր, պրանի, ափսինի և այլն, իրենց ամեն տեսակներով: Փափաքողաց գներու ցուցակը զրկուի առանց ո՛ր է ծախքի: Ցանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ճշգրութեամբ եւ փութով: Բաղաքին մէջ ապրանքներն ձրի կը դրկուին, իսկ քաղաքէ դուրս զրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է: Ըմպելիներ կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօլմէյլ անուրիթէյլ) Մեր յաճախորդք երբ չի հաւանի իրենց գնած ըմպելիքներուն, յանձն կառնենք զայնս փոխել, եթէ պակասած ու փաստուած չըլլան: Ըմպելիքներ կը վաճառուին շիշով, կայրնով, տակառով և յատուկ սնուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր: Դիմել յիւսալ հասցէին կամ Ե. Խ. ԽԷՐՊԷԿԵԱՆ, 535 ՈՒԷՍԹ 57րդ Փողոց, Ն. Ե.